ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 52 68 44
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ info@moh.am

20.05.16 N ԱՀ/08/5371-16
Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր 2016 թվականի մայիսի 17-ի թիվ 282-ի 1 հարցման կապակցությամբ հայտնում եմ.

1. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը թույլ է տալիս «փնտրել» գործառույթով առանձնացնել հարցումները և տեղեկատվություն ստանալու մասին նամակները, որոնք գրանցվում են՝ «վերնագիր» դաշտում պարտադիր նշելով «հարցում» կամ «տեղեկատվություն» բառերը, ինչպես նաև օգտագործվում է տարբերանշան՝ ++:

2. Առողջապահության նախարարության ողջ փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. դեկտեմբերի 18-ի «ՀՀ ԱՆ գործավարության ներքին կարգը սահմանելու մասին» N 82 - Ն հրամանի հիման վրա: Տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև վիճակագրության վարման այլ կարգ չի սահմանված: Հարցումների և տեղեկատվություն պահանջող գրությունների վերլուծությունն իրականացվում է տարին երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակ, ինչը տեղադրվում է ԱՆ պաշտոնական կայքում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ հասարակայնության հետ կապերի
բաժնի պետ Լ.Բաբախանյան Հեռ՝ 010-56-56-08